Հ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԱՎԹԸ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿԱՊԻՏԱԼԸ

Թուրքիայում մինչև 1954 թվականի նավթային օրենքի ընդունումը, նավթային հետազոտությունը և նրա արդյունահանումը համարվում էր պետական մոնոպոլիա, որը իրացնում էր 1933 թ. հիմնադրված Հանքային գիտա-հետազոտական ինստիտուտը (Maden Teknik ve Arama)։ *Պետական այս կազմակերպության կողմից 1940 թ. Թուրքիայում առաջին անգամ հայտնաբերվեց Ռամանդաղի նավթը*[1]։ *Այս լուրը առանձնապես մեծ հետաքրքրություն առաջացրեց Արևմուտքում, մանավանդ այն պատճառով, որ Ռամանդաղը գտնվում է Մերձավոր Արևելքի գեոֆիզիկական շրջանի մոտերքում՝ հանդիսանալով նրա հյուսիս-արևմտյան գրեթե ծայրագույն սահմանը։ Սակայն հարկ է նշել, որ այդ շրջանի նավթի հետազոտման աշխատանքներն ապարդյուն անցան պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում։*

Ետպատերազմյան ժամանակաշրջանում նավթի զարգացման պատմությունը անխզելիորեն կապված է օտարերկրյա կապիտալի տենդագին գործունեության հետ։ Նավթի արքաները ֆինանսավորելով հետազոտման և արդյունահանման աշխատանքները և տրամադրելով համապատասխան նավթային մասնագետներ ու սարքավորումներ, կարողացան իրենց բացարձակ և անմիջական հսկողության տակ վերցնել թուրքական նավթը, իսկ պետական մոնոպոլիայի վերացումից հետո, սկսած 1954 թ., գրեթե ամբողջությամբ իրենք էին տնօրինում այդ հարստությանը։ 1954—62 թթ. ընթացքում օտարերկրյա ներդրումները թուրքական նավթարդյունաբերության մեջ կազմել են 190 մլն. դոլար, այն դեպքում, երբ տնտեսության մնացած բոլոր ճյուղերում, միասին վերցրած, ներդրումների ընդհանուր գումարը հասել է 33 մլն դոլարի[2]։ *Ի դեպ՝ անհրաժեշտ է նշել, որ թույլ զարգացած երկրներում նավթային գործառնությունները ամենահրապուրիչ բնագավառն են հանդիսանում օտարերկրյա կապիտալի էքսպանսիայի համար։ Դրա փաստական շոշափելի ապացույցը ետպատերազմյան ժամանակաշրջանի օտարերկրյա կապիտալի հոսքի ուղղվածությունն է առանձնապես դեպի նավթարդյունաբերության բնագավառը*[3]։ *Ընդ որում, կարևոր է նկատել նաև, որ նավթային գործառնությունների ժամանակ օտարերկրյա մագնատները, իրենց ներդրումները կատարելիս, առանձնակի չեն մտահոգվում տվյալ երկրի քաղաքական և տնտեսական անկայունությամբ, որովհետև շահագործման չափազանց կարճ ժամանակամիջոցում նրանց ձեռք բերած եկամուտները մի քանի անգամ դերազանցում են իրենց ներդրած կապիտալներին։*

* * *

Թուրքիայում ամերիկյան տնտեսական միսիայի ղեկավար Տորնբերգը դեռևս 1947 թ. հատուկ հանդիպում էր ունեցել թուրքական կառավարող շրջանների հետ նավթի հետազոտման հեռանկարների առնչությամբ։ Դրան հետևեցին 1948—49 թթ. ընթացքում ինչպես Թուրքիայում, այնպես և ԱՄՆ-ում թուրքական կառավարության և ամերիկյան նավթային ընկերությունների ներկայացուցիչների միջև տեղի ունեցած մի շարք բանակցությունները՝ նավթի հետազոտման, արդյունահանման և թուրք-ամերիկյան ընկերություն ստեղծելու կազմակերպչական հարցերի վերաբերյալ։ Ամերիկյան մի քանի ընկերություններ առանձնապես մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում Ռամանդաղի նավթի նկատմամբ։ Նույնիսկ ամերիկյան Հորատման և հետազոտ-

---

[1] *Ռամանդաղը գտնվում է Դիարբեքիրի վիլայեթում, սակայն նրա նավթաբեր շերտերը մեծ մասամբ տարածված են Սղերթի վիլայեթում։*

[2] „Ekonomi Gazetesi", 25. X. 1963.

[3] *Տես* „The Encouragement and Protection of Investment in Developing Countries", Michael Brandon, London, 1962, p. 1.

ման ընկերության պրեզիդենտի օգնական Կլեյգոնի անմիջական ղեկավարությամբ Ռամանդաղում փորվեցին 14 նավթահորեր[4]։

Օտարերկրյա մոնոպոլիստները աստիճանաբար և աներեր վճռականությամբ լեզոքացնում էին նավթի պետական մենաշնորհը։ Նրանց նվաճողական մտադրությունների իրագործումը անհամեմատ արագացվեց Թուրքիայի դեմոկրատական պարտիայի իշխանության տարիներին։ Մենդերեսի կառավարության տասը տարիների ընթացքում (1950—1960 թթ.) հրապարակվեցին մի շարք օրենքներ, որոնք աստիճանաբար վերացնում էին օտարերկրյա կապիտալի ներթափանցումը և գործունեությունը սահմանափակող արգելակները։ 1950 թ. մարտի 4-ի № 5567[5] և 1951 թ. օգոստոսի 9-ի № 5821[6] օրենքները որոշ արտոնություններ և իրավունքներ տվեցին օտարերկրյա կապիտալի գործունեությանը երկրի տնտեսության, այդ թվում նաև նավթարդյունաբերության մեջ։ Ըստ որում առաջին օրենքով խոստացվում էր երաշխավորություն օտարերկրյա կապիտալ ներդրումներին, իսկ երկրորդով՝ հյուրընկալման մեծ պատրաստակամություն[7]։ Այս օրենքները ուժի մեջ մտնելուց հետո օտարերկրյա կապիտալի թափանցումն սկսեց համեմատաբար աշխուժանալ։ 1951 թ. հիմնադրվեց «Թուրք-Սոկոնի ընկերությունը» 15 մլն թ. լ. (թուրքական լիրա) կապիտալով, որի 14 միլիոնը պատկանում էր Սոկոնի Վակուումին, իսկ 1 միլիոնը էթիբանկին։ 1953 թ. հիմնադրվեց նաև «Թուրք-Ամերիկյան նավթային ընկերությունը», որի կապիտալի 55 տոկոսը պատկանում էր էթիբանկին, իսկ 45 տոկոսը ամերիկյան և մի շարք թուրք մասնավոր ընկերությունների։ Այդ նույն տարում Ստանդարտ, Շել և Կալտեքս ընկերությունները հայտարարեցին, որ իրենք մտադիր են մասնագետներ ուղարկել Թուրքիա նավթի հետազոտման համար, իսկ ԱՄՆ-ի փոխադարձ Անվտանգության կազմակերպությունն էլ, իր հերթին, հայտարարեց, որ Թուրքիային տրամադրել է մի մեծ գումար (դոլարի հաշվով)՝ սարքավորումներ ներմուծելու համար։ 1952 թ. ամերիկյան Ռալֆ Պարսոնս կոմպանիան իրավունք ստացավ կառուցելու տարեկան 330 հազ. տոննա կարողություն և 56 մլն. թ. լ. արժողություն ունեցող Բաթմանի (Ռամանդաղից 23 կմ հյուսիս) նավթաթորման գործարանը, որի կապիտալի 55 տոկոսը պատկանում էր պետության, իսկ 45 տոկոսը թուրքական մասնավոր ձեռնարկատերերին։ Այն նախատեսված էր բավարարելու երկրի պահանջների 30%-ը[9]։ Սկզբնական շրջանում գործարանը աշխատելու էր ամերիկյան մասնագետների միջոցով։ Մշակվելիք նավթը ստացվելու էր մինչև 1952 թ. հայտնաբերված Ռամանդաղի, Գարզանի (Ռամանդաղից 20 կմ հյուսիս-արևմուտք) և Բաթմանի մի քանի տասնյակ հորերից, որոնց միայն կեսն էր պիտանի արտադրության համար[10]։ Ի դեպ՝ նշենք, որ մինչև 1955 թ., այսինքն՝ մինչև նավթաթորման գործարանի ավարտը, նավթահորերից ստացված նավթը չմշակված վիճակում օգտագործվում էր շոգեքարշերի մեջ իբրև վառելիք։

Այնուամենայնիվ 1950 և 1951 թվականների օրենքները լրիվ բավարարություն չտվեցին օտարերկրյա կապիտալի էքսպանսիայի նկրտումներին, որովհետև վերջինս պահանջում էր պետական մոնոպոլիայի բացարձակ վերացում և օտարերկրյա կապիտալի գործունեության անսահմանափակ ասպարեզ։ Թուրքական կառավարության տնտեսական նոր քաղաքականության շնորհիվ և մասամբ Արևմուտքի ճնշման հետևանքով 1954 մարտի 16-ին ընդունվեց նավթային օրենքը (№ 6327)[11]։ Կառավարության այս նոր միջոցառումը նպատակ ուներ կարճ ժամանակամիջոցում, օտարերկրյա կապիտալի ջանքերով, զարգացնել երկրի նավթային ռեսուրսները։ Կառավարող շրջանների հակումը այնքան ուժեղ էր, որ նավթային օրենքի հետ զուգընթաց մշակվել էին նաև հատուկ միջոցառումներ, որոնցով նախատեսվում էին օտարերկրյա նավթային ընկերությունների կողմից կոնցեսիա ստանալու կոնկուրենցիայի լայն հնարավորություններ,

---

[4] Տես „Муасир Туркиједе Харичи Капитал", Ի. Ə. Əлиев, Баки, 1962, с. 66—67.

[5] „Resmi Gazete", 4. 3. 1950.

[6] „Resmi Gazete", 9. 8. 1951.

[7] Տես „Foreign Capital Investments in Turkey", Rasim Genani, Istanbul, 1954, p. 9.

[8] Պետական բանկ, որը տնօրինում է լեռնարդյունաբերության պետական ձեռնարկությունները և էլեկտրակայանները։

[9] „Akşam", 27. 7. 1955.

[10] Տես „Oil in the Middle East", Stephan Hemsley Longrigg, London, 1961, p. p. 236—237.

[11] „Resmi Gazete", 16. 3. 1954.

որպեսզի ապահովվի օտարերկրյա նավթային կապիտալի առավելագույն հոսքը դեպի Թուրքիա[12]։ Նավթային նոր օրենքը 1955 և 1957 թթ. ենթարկվեց մասնակի փոփոխությունների, որոնք էլ ավելի ընդարձակեցին օտարերկրյա նավթային ընկերությունների գործունեության ոլորտը[13]։

Նավթային օրենքը պատրաստված էր ամերիկացիների թելադրանքով և նույնիսկ նրանց ուղղակի մասնակցությամբ։ Այդ աշխատանքներին նրանք ձեռնամուխ եղան 1953 թ. Թուրքիա այցելած ամերիկյան միսիայի ղեկավար Ռենդոլի և 1954 թ. սկզբներին Մաքս Բոլլի միջոցով, վերջինս ճանաչված է իբրև նավթային օրենքների գիտակ անձնավորություն[14]։ Այս օրենքի համաձայն Թուրքիայում սկսեցին գործել հետազոտման 9 շրջաններ (բլոկներ), որոնցում, սակայն, չէին ընդգրկված Էրզրումի և Սվազի վիլայեթները, որոնք ռազմական նկատառումներով համարվում էին փակ շրջաններ։ Ըստ որում նախատեսվել էր յուրաքանչյուր ընկերության տալ հետազոտման 6 տարվա արտոնություն, իսկ ժամկետի սպառման դեպքում կարելի էր երկարաձգել երկու անգամ՝ երկու լրացուցիչ տարիներով։ Շահագործումը թույլատրվում էր 40 տարի ժամանակով, իսկ պայմանավորվածության դեպքում՝ հնարավոր էր երկարաձգել այն մինչև 60 տարի։ Ստեղծված ընկերություններից պետությունը սկզբնական շրջանում հարկ էր գանձելու յուրաքանչյուր ընկերության եկամտի 12,5 տոկոսի չափով, որը հետագայում պետք է բարձրանար և հասներ մինչև 50 տոկոսի։ Սակայն օտարերկրյա ֆիրմաներին իրավունք էր վերապահված տեղական հարկերից ազատվել քանի դեռ նրանց եկամուտները չէին գերազանցում ներդրած կապիտալներին[15]։ Այս օրենքի հրապարակմամբ Հանքային գիտա-հետազոտական ինստիտուտը կորցրեց իր նավթային մենաշնորհը և դրա փոխարեն ստեղծվեց «Թուրքական նավթային ընկերությունը» (TPAO—Turkiye Petrolleri Anonim Ortakligi) 150 մլն. թ. լ. կապիտալով, որի մեջ իր մասնակցությունն ուներ նաև թուրքական մասնավոր կապիտալը[16]։

Նավթային օրենքի ընդունումից անմիջապես հետո, օտարերկրյա նավթային ընկերությունների գործունեության համար ստեղծված բարենպաստ պայմանների հետևանքով մի անգամից քսան ընկերություններ դիմեցին թուրքական կառավարությանը՝ հետազոտման արտոնություններ ձեռք բերելու համար։ Երկիրը ծածկվեց օտարերկրյա գեոլոգիական և գեոֆիզիկական արշավախմբերով։ Այն դեպքում, երբ նավթի հետազոտման աշխատանքների վրա 1949—54 թթ. ծախսվել էր միայն 26,6 մլն թ. լ.[17], 1955—59 թթ. ընթացքում՝ ծախսերի գումարը հասավ 370 մլն թ. լ.-ի[18]։ 1949—59 թթ. հետազոտման աշխատանքների վրա ծախսված գումարը, ըստ սեկտորների, բաժանված է եղել հետևյալ կերպ[19]։

Պետության բաժինը	34,9 մլն թ. լ.
Թուրքական նավթային ընկերության բաժինը	27,1 մլն թ. լ.
Օտարերկրյա ֆիրմաներինը	334.6 մլն թ. լ.
Ընդամենը	396.6 մլն թ. լ.

Ինչպես երևում է վերոհիշյալ տվյալներից, ընդհանուր գումարի 90 տոկոսը պատկանում է օտարերկրյա ֆիրմաներին, ըստ որում այդ գումարն էլ, իր հերթին, գրեթե ամբողջությամբ, ծախսվել է 1954—59 թվականներին։ Համաձայն Թուրքիայի արդյունաբերության մինիստրության զեկուցագրի տվյալների, 1954-ից մինչև 1964 թ. վերջը, երկրի ավելի քան 300 մասերում օտարերկրյա 35 ընկերություններ նավթի հետազոտման աշխատանքներ են տարել և ներդրել 778 մլն թ. լ.[20]։

---

[12] Տես М. Х. Вишняков, К вопросу о нефтяной промышленности Турции, „Проблемы современной Турции", Москва, 1963, стр. 178.

[13] Տե՛ս „Investing and Licensing Conditions in 40 Countries". Business International Research Report, New York, 1962, p. 82.

[14] Տե՛ս „Турецко-американские разногласия по вопросу о развитии турецкой экономики", Поцхверия, Москва, 1961, с. 46.

[15] Տես „Investing and Licensing Conditions in 40 Countries", p. 82.

[16] Տես „Birinci Beş Yıllık Kalkınma Planı" (1963—67), Ankara, 1963, s. 84.

[17] „Iktisat Gazetesi", 6. 7. 1961.

[18] „Middle East Economic Digest", London, 8. 4. 1960, p. 166.

[19] „Iktisat Gazetesi", 6. 7. 1961.

[20] „Ekonomi Gazetesi", 8. 4. 1965.

1955—59 թթ. ընթացքում օտարերկրյա ընկերությունները ձեռք են բերել 216 արտոնագրեր 9,914,658 հեկտար տարածության վրա հետազոտություններ կատարելու համար[21]։ Օտարերկրյա ֆիրմաների մեջ ամերիկյանը գերակշռում էր ոչ միայն քանակապես, այլև արտոնագրերի, ներդրումների ու հորատումների չափերով։ ԱՄՆ-ը, այդպիսով, ձգտում էր իմպերիալիստական մյուս կոնկուրենտներ՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Արևմտյան Գերմանիայի և Իտալիայի նկատմամբ առավելություն ձեռք բերել նավթային ռեսուրսների տիրապետման բնագավառում։ Ամերիկյան ֆիրմաներից հետո երկրորդ տեղն էին բռնում անգլիական ֆիրմաները։ 1964 թ. հունվարի 1-ի դրությամբ՝ ԱՄՆ-ի և Անգլիայի նավթային ընկերությունների ներդրումները կազմել են 170 մլն դոլար և կամ ընդհանուր օտարերկրյա ներդրումների 85 տոկոսը[22]։ Սակայն օտարերկրյա ֆիրմաների մեծ մասը, 6 տարվա ապարդյուն որոնումներից հետո, սկսեցին աստիճանաբար հեռանալ երկրից։ Այսպես, 1960—61 թվականների ընթացքում Թուրքիայից հեռացան 10 օտարերկրյա ֆիրմաներ, 1962-ին՝ 5, 1963 թ.՝ 3։ 1961 թ. հեռացող ընկերություններից միայն Լուան 6 տարվա ընթացքում 33 տարբեր տեղերից ստացել էր 15800 քառ. կմ կոնցեսիա և ծախսել էր 20 մլն դոլար[23]։ Սկսած 1961 թ. առանձնապես զգալի է «Թուրքական նավթային ընկերության» ստացած արտոնագրերի աճը։

Հավաստի տեղեկությունների բացակայության պատճառով, դժբախտաբար, հնարավոր չէ տալ յուրաքանչյուր ընկերության գործունեությունը իր մանրամասնություններով։ Միայն կարելի է ասել, որ երկար տարիների որոնումների հետևանքով օտարերկրյա ֆիրմաներից երկու ընկերություններ միայն հասան հաջողության։ 1960 թ. Մոբիլ ընկերությունը Բուլղուր-դաղում[24], իսկ Շելը Սեբիլհանեում[25] հայտնաբերեցին նավթ։

Մոբիլ ընկերության կողմից 1960—61 թթ. ընթացքում Բուլղուր-դաղում փորված հորերից միայն երեքն էին նավթաբեր, յուրաքանչյուրը 5500 մինչև 7800[26] տոննա տարեկան միջին արտադրողականությամբ։ 1961 թ. Շել ընկերությունը հայտնաբերեց իր երկրորդ նավթաբեր հորը Կարակոյում (Սեբիլհանեի մոտ)։

Օտարերկրյա նավթային ֆիրմաների ընդհանուր գործունեության մոտավոր պատկերը ներկայացնում ենք ստորև բերված աղյուսակով[27]։

Տարիներ	Թուրքական նավթային ընկերության հորատումները (մետրերով)	Օտարերկրյա ընկերությունների հորատումները (մետրերով)	Ընդամենը (մետրերով)
1955	15241	1000	16241
1956	15989	3098	19087
1957	12465	11681	24146
1958	19426	28331	47757
1959	24553	36127	60680
1960	27624	38710	66334
1961	43022	45668	88690
1962	47178	25865	73043
1963	59441	24734	84175
Ընդամենը	264939	215214	480153

Ինչպես պարզվում է բերված տվյալներից, 9 տարվա ընթացքում կատարվել են 480153 մետր ընդհանուր երկարությամբ հորատումներ, որոնց 45 տոկոսը պատկանում է օտարերկրյա ընկերություններին։ Սակայն հարկ է նշել, որ մինչև 1961 թ., օտարերկրյա ֆիրմաների բա-

[21] "Turkiye Petrol Sanayii", Istanbul, 1964, s. s. 138—140.

[22] Տե՛ս М. Юрьев, Долларовый капкан на турецкой земле, „Международная жизнь", Москва, 1964, № 10, с. 104.

[23] „Three Monthly Economic Review—Turkey", London, November, 1960, № 36, p. 5.

[24] Բուլղուր-դաղը գտնվում է Մերսինից 50 կմ դեպի հյուսիս-արևելք։

[25] Սեբիլհանեն գտնվում է Դիարբեքիրից 43 կմ հեռավորության վրա, որը հեռու չէ հիմնական նավթարդյունահանող Ռամանի և Գարզանի դաշտերից։

[26] Three Monthly Economic Review—Turkey", May", 1961, № 38, p. 5.

[27] „Yön", 25. 12. 1964.

ժինը ավելի ծանրակշիռ է եղել, կազմելով նույնիսկ 50 տոկոսից ավելին։ Սկսած 1962 թ. օտարերկրյա ֆիրմաների հորատումների նվազումը խոսում է այն մասին, որ թուրքական նավթը չէր արդարացնում օտարերկրյա կապիտալի հույսերը։ Ինչ վերաբերվում է թուրքական բաժնի ակտիվությանը, առանձնապես սկսած 1961 թ., ապա այն պայմանավորված է նրանով, որ նոր կառավարությունը հատուկ ուշադրություն էր նվիրում նավթարդյունաբերության զարգացմանը, որին մեծապես նպաստեցին 1960 թ. հայտնաբերված մի շարք նավթաբեր հորերը։ Օտարերկրյա նավթային ֆիրմաները, բացի ընդերքի սև ոսկուն տիրանալու իրենց նկրտումներից, նպատակ ունեին նաև ձեռք բերել թուրքական նավթային շուկան, որով կկարողանային բազմապատկել իրենց շահույթները։

Ընդհանրապես նշենք նաև, որ թուրքական նավթի նկատմամբ օտարերկրյա կոնցեռների ցուցաբերած շահագրգռվածությունը բխում էր ինչպես Թուրքիայում ունենալիք իրենց նավթային գործարքից, այնպես էլ՝ Մերձավոր Արևելքի նավթի անընդմեջ շահագործման և պահպանման դրդապատճառներից։ ԱՄՆ-ի դեպարտամենտի 1964 թ. օգոստոսի № 7706 պաշտոնական բրոշյուրում Մերձավոր Արևելքի՝ Արևմուտքի համար ունեցած ստրատեգիական և տնտեսական կարևորության մասին ասված է. «Մերձավոր Արևելքի շրջանը իր ընդերքում պարունակում է աշխարհի նավթի պաշարների $^2/_3$-ը։ Այդ նավթի անդադար հոսքը անհրաժեշտ է եվրոպական մեր դաշնակիցների տնտեսական և ռազմական հզորության համար, որը իր հերթին կարևոր է ԱՄՆ-ի ապահովության համար»[28]։ Այնուհետև բրոշյուրը, ելնելով հիմնական այս դրույթից, պարզաբանում է Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի կողմից տարվող քաղաքական և տնտեսական խնդիրները, որոնց իրագործումը «...միշտ էլ վստահվել է ՆԱՏՕ-ի և ՍԵՆՏՕ-ի անդամ հանդիսացող Թուրքիային»[29]։ Այսպիսով, արաբական երկրներում ազգային ազատագրական պայքարի աճի և մասնավորապես վերջին տարիներին այդ երկրներում նավթի ազգայնացման պահանջների հետևանքով ստեղծված իրադրության պայմաններում միջազգային նավթային մոնոպոլիան հանձին Թուրքիայի տեսնում է իր հավատարիմ նեցուկին և ձգտում է թուրքական նավթը դարձնել Մերձավոր Արևելքի նավթային գործառնությունների բաղկացուցիչ մասը՝ ծառայեցնելով այն ՆԱՏՕ-ի և ՍԵՆՏՕ-ի շահերին։

Այս նույն նկատառումներով էլ 1957 թ. մարտին երկու ամերիկյան և երկու անգլիական ընկերություններ սկսեցին բանակցություններ վարել թուրքական կառավարության հետ՝ Մերսինում երկրորդ նավթաթորման գործարանը հաստատելու համար։ Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, գործարանի կառուցումը արժենալու էր 48 մլն դոլար՝ տարեկան 3,25 մլն տոննա արտադրողականությամբ։ Ըստ որում ներդրված կապիտալի 71 տոկոսը հավասարապես բաժանված էր ամերիկյան երկու ընկերությունների՝ Մորիլի և Կալտեքսի միջև, իսկ մնացած 29 տոկոսը անգլիական երկու ընկերությունների՝ Շելի և Բրիտիշ Պետրոլիումի միջև 18 : 11 հարաբերությամբ։ Այդ պայմանագրի նվաստացուցիչ և կաշկանդող կետը Թուրքիայի համար այն էր, որ նա պարտավորվում էր երկրին անհրաժեշտ եղած նավթը տասներկու տարի շարունակ գնել միայն այդ գործարանից։ Բացի դրանից, բաժնետերերը իրավունք էին ստանում իրենց շահույթը ամբողջությամբ արտասահման տեղափոխել։ 1959 թ. Կալտեքսը հեռացավ այդ խմբավորումից, որպեսզի իր սեփական նավթաթորման գործարանը կառուցի։ Ինչպես կտեսնենք հետագայում, Կալտեքսի նման վարմունքը հետապնդում էր հետագայի ավելի մեծ հեռանկար։ Այսպիսով, նախագծում բաժնետերերի մասնակցությունը հետևյալ բնույթն ստացավ. Մորայլը 56 տոկոս, Շելը՝ 27 տոկոս, Բրիտիշ Պետրոլիումը՝ 17 տոկոս[30]։ Մերսինի «Անատոլական թորման ընկերության» (ATAŞ) նախագծում կար նաև երկու նավթապահեստների և մեկ նավամատույցի կառուցումը։

Երրորդ նավթաթորման գործարանը «Ստամբուլի նավթաթորման կորպորացիան» (IPRAŞ) նախատեսվեց կառուցել Թյությունչիֆլիգում՝ Իզմիտի մոտ։ Գործարանի կառուցումը արժենալու էր 25.6 մլն դոլար տարեկան մեկ մլն տոննա կարողությամբ, որի բաժնետերերն էին, մի կողմից՝ թուրքական պետությունը իր 44,99 մլն. թ. լ. կապիտալով, իսկ մյուս կողմից՝ Կալտեքսը 45.01 մլն. թ. լ.-ով[31]։ Երկու նավթաթորման գործարանների շինարարությունն սկսվեց 1960 թ.

---

[28] „The US and the Middle East". Department of state publication. № 7706, August, 1964, p. 1.

[29] Տե՛ս նույն տեղում, էջ 2—3։

[30] „Three Monthly Economic Review –Turkey", February, 1960, № 33, p. 4.

[31] „Birinci Beş Yıllık Kalkınma Planı", s. s. 86 –87.

սկզբներին։ Մերսինի գործարանի կառուցումն ստանձնեց անգլիական Ֆոստեր Ուիլեր (ամերիկյան Ֆոստեր Ուիլեր կորպորացիայի ֆիլիալն է) ֆիրման, իսկ Իզմիտինը՝ ամերիկյան Կելոգ ընկերությունը։

Նավթաթորման երկու գործարաններն էլ աշխատելու էին ներմուծվող նավթի բազայի վրա, իսկ հետագայում, աստիճանաբար՝ տեղականի, եթե նոր նավթ հայտնաբերվեր Թուրքիայում։ 1960 թ. տվյալներով՝ Թուրքիայում նավթի հանույթը եղել է տարեկան 362,000[32] տոննա, որը ի վիճակի էր բավարարել միայն Բաթմանի նավթաթորման գործարանին։

Իզմիտի նավթաթորման գործարանի շինարարությունն ավարտվեց 1961 թ. սեպտեմբերին, իսկ Մերսինինը 1962 թ. հոկտեմբերին, վերջինս իր մեծությամբ Միջերկրականի ավազանում բռնում է երկրորդ տեղը Նեապոլիից հետո։ Գործարանի շինարարությունը արժեց 44 մլն դոլար[33]։ Մերսինի գործարանը մոտ լինելով Թուրքիայի հարավ-արևելյան նավթային շրջաններին, ավելի մեծ հնարավորություններ ուներ հետագայում աստիճանաբար օգտվելու տեղական նավթից։ Արդեն իսկ գործարանի թողարկման առաջին տարում չմշակված նավթի շատ չնչին մասը՝ օրական 5000[34] տակառ (1 տակառը հաշվվում է 150 լ.) ստացվում էր Մորիլի Բուլղուր-դաղի նավթահորերից։ Այս իսկ պատճառով ATAS-ը նախատեսեց անցկացնել նավթամուղ Բուլղուր-դաղից Մերսին։

Վերջին տարիներին տեղական նավթի հանույթը թեև բավական աճել է, այնուամենայնիվ այն շատ հեռու է բավարարելու երկրի պահանջները, մանավանդ եթե նկատի ունենանք, որ Թուրքիայի նավթի տարեկան պահանջը աճում է 10 տոկոսով[35]։ Համաձայն արդյունաբերության մինիստրի զեկուցագրի, 1965թ. ընթացքում Թուրքիան անհրաժեշտություն է զգում չմշակված 4 մլն 930 հազ. տոննա նավթի, որի 1 մլն 247 հազ. տոննան արտադրվում է տեղում, իսկ մնացած 3 մլն 503 հազ. տոննան[36] պետք է ներմուծվի Մերձավոր Արևելքից՝ Մերսինի և Իզմիտի նավթաթորման գործարանների համար։ Տեղական նավթի հանույթի աճը հիմնականում գալիս էր Ռամանդաղի, Գարզանի և Բաթմանի նավթահորերից։ Այս շրջաններին սպասարկող Բաթմանի նավթաթորման գործարանը, թեև ընդարձակվել էր և արդեն իսկ 1961 թ. սկսած կարողանում էր մշակել 580.000[37] տոննա նավթ, այնուամենայնիվ ի վիճակի չէր ամբողջությամբ սպառելու տեղական նավթը։ Այստեղից էլ պահանջ առաջացավ Բաթմանի նավթի մեկ մասը չմշակված վիճակում հասցնել Իսկենդերունի նավահանգիստը, ուստի և նախատեսվեց կառուցել 500 կմ երկարությամբ և 18 դյույմ հատվածքով Բաթման—Իսկենդերուն նավթամուղը, որը օրական մղելու էր 3600 տոննա նավթ։ Այս նախագիծը բաղկացուցիչ մասն է կազմում Թուրքական հնգամյա պլանի և նավթամուղի կառուցումը արժենալու է 300 մլն թ. լ.[38], որի 65 տոկոսը ֆինանսավորելու էր օտարերկրյա կապիտալը։ Նախագծի ուսումնասիրման սկզբնական աշխատանքները ստանձնեցին ամերիկյան Բրաուն և Ռուտ ֆիրմաները 480,000 դոլարով[39]։ Նախատեսված է շինարարությունն ավարտել 1967 թ. սկզբներին։ Վերջին ժամանակներս Թուրքիայում գործող օտարերկրյա ֆիրմաները մեծ շահագրգռվածություն են հանդես բերում նավթամուղի կառուցման մեջ։ Այժմ բանակցություններ են գնում Թուրքական նավթային ընկերության հետ, այն համատեղ կառուցելու համար[40]։

Նավթային մոնոպոլիստների և թուրքական կառավարության միջև տարված բանակցությունները «Մերոգազի» նախագծի կապակցությամբ դեռևս 1962 թ. կեսերին հասան համաձայնության և փոխըմբռնման։ Այդ նախագծի էությունն այն է, որ Մերձավոր Արևելքի բնական գազը Թուրքիայի և Հարավսլավիայի վրայով հասցնել է Արևմտաեվրոպական շուկան։ Մինչև Թուրքիայի հետ բանակցություններ սկսելը, Մերոգազը արդեն պայմանագրեր էր ստորագրել Հորդանանի և Սիրիայի հետ։ Համաձայն Արևմուտքի մամուլի ենթադրությունների՝ Մալաթիայում կառուցվելու է պոմպային կայան, որտեղից գազամուղը գնալու է Անկարա, այնուհետև Պոլիս

---

[32] „Economic Development in the Middle East", 1959—61, UN, 1961, p. 134.
[33] „Three Monthly Economic Review—Turkey", May, 1961, № 38, p. 5.
[34] „The Times", 14. 5. 1962.
[35] „Ulus", 1. 1. 1962.
[36] „Ekonomi Gazetesi", 28. 5. 1964.
[37] „Birinci Beş Yillik Kalkınma Planı", s. 199.
[38] „Ekonomi Gazetesi", 28. 1. 1965.
[39] „Middle East Economic Digest", 18. 9. 1964, p. 422.
[40] „Middle East Economic Digest", 2. 4. 1965, p. 166.

և այնտեղից դեպի արևմուտք[41]։ Առայժմ Մերոգազը շարունակում է իր բանակցությունները մնացած երկրների հետ և իր նախագծի նախնական հետազոտություններն է կատարում։

Թուրքական նավթը սերտ կապերով կապված է ՆԱՏՕ-ի և ՍԵՆՏՕ-ի ռազմական պլանների հետ։ Սկսած 1955 թ. ՆԱՏՕ-ն ձեռնամուխ էր եղել ընդհատակյա երկու նավթամուղերի կառուցման, որոնք սպասարկելու էին Թուրքիայում տեղադրված ՆԱՏՕ-ի ռազմական ուժերին։ Առաջին նավթամուղը Անտալիայից, Էսկիշեհիրի վրայով ձգվելու էր Պոլիս, իսկ երկրորդը՝ միացնելու էր Իսկենդերունը, Էրզինջանին՝ Մալաթիայի և Բաթմանի վրայով։ Այս նավթամուղերի շինարարությունն սկսվեց 1956 թ. և ավարտվեց 1961 թ. սկզբներին։ Այն արժեցավ ավելի քան 100 մլն դոլար։ Նավթամուղերը մատակարարվում են Մերձավոր Արևելքից տանկերների միջոցով Իսկենդերունի և Անտալիայի նավահանգիստները բերված նավթով, որտեղ տեղադրված են գլխավոր պոմպային կայանները։ ՆԱՏՕ-ի հետագա պլանների մեջ է մտնում նաև երկրորդ նավթամուղի կառուցման շարունակությունը մինչև Արևելյան Անատոլիայի և սևծովյան շրջանները։

Նկատենք, սակայն, որ Թուրքիայում գնալով սրվում են հակասությունները առանձնապես տեղական և օտարերկրյա ֆիրմաների միջև։ Դեռևս 1962 թ. Մերսինի նավթաթորման գործարանի թողարկման պատճառով հակասություններ առաջացան Թուրքական նավթային ընկերության և օտարերկրյա նավթային ընկերությունների միջև[42]։ Թուրքական նավթային ընկերությունը պահանջում էր բարեփոխել գոյություն ունեցող նավթային օրենքը, որպեսզի հսկողության տակ առնվի և կասեցվի օտարերկրյա ընկերությունների կողմից անսահմանափակ քանակությամբ չմշակված նավթի ներմուծումը, որը խանգարում էր տեղական նավթարդյունաբերության զարգացմանը։ 1963 թ. Թուրքական նավթային ընկերությունը, զգալով թուրքական կառավարության անզորությունը և ելնելով նավթային օրենքի 2-րդ հոդվածից[43], առաջարկում է կառավարությանը, որպեսզի պարտագրի Թուրքիայում գործող բոլոր նավթային առևտրով զբաղվող ընկերություններին գնել և վաճառել միայն Բաթմանի նավթը։ Բարձրացված հարցերի քննարկման և լուծման համար արդյունաբերության մինիստրության կողմից նշանակված հանձնաժողովը մերժեց Թուրքական նավթային ընկերության առաջարկը[44]։ Դրա փոխարեն կառավարությունը նախագիծ ընդունեց ներմուծվող նավթի մաքսը բարձրացնելու մասին։ Սակայն թուրքական կառավարության մտադրությունները անմիջապես հանդիպեցին Արևմուտքի ուղղակի դիմադրության։ ԱՄՆ-ը որոշեց 350 մլն թ. լ.-ով կրճատել թուրքական բանակի համար նախատեսված հեղուկ վառելիքի հատկացումները[45]։

1963 թ. հակասություններ սրվեցին նաև երկու պետական կազմակերպությունների՝ Թուրքական նավթային ընկերության և նավթային վարչության (Petrol Ofisi) միջև, այն բանի համար, որ վերջինս ունենալով նավթի գնման և վաճառքի լիազորություններ, գերադասում էր գնել Իզմիտի նավթը, որի հետևանքով չէր վաճառվում Բաթմանի արտադրանքը։ Անգլիական «Թուրքիայի նոամսյա տնտեսական տեսություն» հանդեսը անդրադառնալով այդ հակասությանը, գրում է. «Նավթային վարչությունը նախընտրում է Իզմիտի նավթը, քանի որ այն ավելի մոտ է սպառման շրջաններին (նկատի ունի տրանսպորտի ծախսերի խնայումը—Հ. Մ.) և վերջին հաշվով նա շահագրգռված է տվյալ գործարանի նավթի վաճառքով, քանի որ բաժնետերերից մեկն էր նաև պետությունը»[46]։ Բնականաբար նման բացատրությունը, որը պաշտպանում էր պետական նավթային վարչության գործողությունները, չէր ելնում երկրի շահերից և այդ հակասությունները տեղափոխելով սոսկ երկու պետական ձեռնարկությունների հարաբերությունների ոլորտը, նպատակ ուներ քողարկել Կալտեքսի նավթային գործառնությունները։ Մինչդեռ Թուրքական նավթային ընկերությունը արդարացի կերպով ահազանգում էր, որ նավթային վարչության բռնած դիրքը նպաստում էր անսահմանափակ քանակությամբ չմշակված նավթի ներմուծմանը, որի հետևանքով տեղի էր ունենում օտարերկրյա վայրուտայի ավելորդ վատնում։ Թուրք տնտեսագետ Դողան Ավչիոգլուի հաշվումներով՝ Թուրքիան տարեկան 20 մլն դոլարի կորուստ է

---

[41] „Middle East Economic Digest", 29. 1. 1962, p. 299.

[42] „Three Monthly Economic Review—Turkey", November, 1962, № 44, p. 9.

[43] Նավթային օրենքի 2-րդ հոդվածով TPAO-ին տրված էին որոշ իրավունքներ ինչպես հետազոտման, այնպես և շահագործման արտոնությունների կապակցությամբ։ Այս մասին տես Turkey a promising field for foreign investment", Ankara, 1958, p. 49.

[44] „Three Monthly Economic Review —Turkey", March, 1963, № 45, p. 7.

[45] „Мировая экономика и международные отношения", Москва, 1963, № 11, стр. 75.

[46] „Three Monthly Economic Review—Turkey", June, 1963, № 46, p. p. 7—8.

ունենում միայն այն պատճառով, որ օտարերկրյա ֆիրմաների ներմուծած նավթը 35 տոկոսով բարձր է սահմանված միջազգային գներից[47]։

1964 թ. կեսերին, ազգային նավթարդյունաբերությունը փակուղուց դուրս բերելու ուղղությամբ պետության գործադրած ջանքերը, որոնք առաջին հերթին նպատակ էին հետապնդում ընդարձակել Թուրքական նավթային ընկերության շուկան (հիմնականում նկատի էր առնված պետական ձեռնարկությունների նավթի գնումը Բաթմանի նավթաթորման գործարանից—Հ. Մ.) մեծ չափով անհանգստություն պատճառեցին Թուրքիայում գործող օտարերկրյա ֆիրմաներին և հանդիպեցին նրանց ուժեղ դիմադրությանը։ Այդ կամպանիային իրենց ակտիվ մասնակցությունը ցուցաբերեցին նաև ՆԱՏՈ-ն և ՍԵՆՏՈ-ն, որոնք հանդես եկան գրավոր պաշտոնական հայտարարությամբ այն մասին, որ իբր «Թուրքիան ձգտում է նավթային մոնոպոլիայի»[48], որն առնվազն սպառնալիք էր Թուրքիայի հասցեին, նավթային այս ծավալվող պայքարը մեծ արձագանք գտավ թուրքական «Յոն» շաբաթաթերթի էջերում. «Ինչքա՞ն էլ զարմանալի թվա,—գրում է թերթը,—օտարերկրյա ֆիրմաները պետության նավթի գնումը պետությունից դիտում են որպես մոնոպոլիա... Իսկ Թուրքիան վախենալով օտարերկրյա կապիտալի հոսքի նվազումից և Ընդհանուր Շուկայում[49] իր մասին ստեղծվելիք անբարենպաստ տպավորությունից, չի համարձակվում կոնկրետ միջոցառումներ ձեռնարկել»[50]։ «Յոն»-ի այս տողերը շատ բան են խոսում կառավարող շրջանների անվճռականության, օտարերկրյա կապիտալի նկատմամբ ներկայումս ցուցաբերվող քաղաքականության, ինչպես և այն բազմաթիվ կապերի մասին, որոնցով Թուրքիան միացած է Արևմուտքին։

Մեծ չափերի է հասնում թուրքական նավթից օտարերկրյա ընկերությունների ստացած եկամուտները։ «Յոն» թերթի հաշվարկներով 1 մլն տոննա տեղական նավթի մշակումից օտարերկրյա ֆիրմաները ստանում են 320 մլն թ. լ. շահույթ։ Եվ համաձայն գործող օրենքների, ստացված այդ շահույթի հարկումից հետո հնարավոր է դառնում 18 մլն դոլարը արտահանել[51]։ Այսպիսով, եթե նկատի ունենանք, որ օտարերկրյա կապիտալին պատկանող երկու նավթաթորման գործարանների տարեկան արտադրությունը 3.5 մլն տոննա է, ապա նրանք, որպես շահույթ, տարեկան կարտահանեն 63 մլն դոլար։ Նույն թերթի իսկ արած կարևոր հետևությունն այն է, որ Թուրքիայի համար ավելի ձեռնտու է պատրաստի նավթի ներմուծումը, քան նրա արդյունահանումն ու մշակումը։

Թուրքական հնգամյա պլանում (1963—67) նավթը հատուկ ուշադրության է արժանացել։ Պլանով նավթարդյունաբերության զարգացմանը հատկացված է 1720 մլն թ. լ., այսինքն հընգամյա պլանի բոլոր նախատեսումների 3 տոկոսը, որի 762 մլն թ. լ. պետք է լինի արտաքին ֆինանսավորման հաշվին[52]։ Պլանում հատուկ ուշադրության է արժանացել նավթաթորման գործարանների տարեկան արտադրանքի ավելացումը։ Եթե 1962 թ. երկրի երեք նավթաթորման գործարանները տվել են 3314.8 հազ. տ., ապա 1967-ին հնգամյա պլանի վերջում նախատեսված է այն հասցնել 4780 հազ. տոննայի[53]։ Հնգամյա պլանով նավթարդյունաբերության մեջ կատարելիք ներդրումների ստորև բերված աղյուսակը[54] բավական լավ պատկերացում է տալիս մեզ օտարերկրյա կապիտալի առանձին բնագավառների նկատմամբ ցուցաբերած շահագրգռվածության, ինչպես և թուրքական կառավարության ակնկալությունների մասին։

Ինչպես նկատելի է, ներդրումների արտաքին ֆինանսավորման հիմնական մասը, այսինքն 40 տոկոսը նախատեսված է գազամուղերի և նավթամուղերի շինարարության համար։ Իրոք, այս բնագավառում մեծ ակտիվություն են ցուցաբերում՝ ներքին շուկայի տիրապետությունը ընդարձակելու համար։ Չնայած այն բանին, որ նավթի հետազոտման նախատեսումների շատ աննշան բաժինն է հատկացված արտաքին ֆինանսավորմանը՝ ընդամենը ընդհանուրի 4.2 տոկոսը, այնուամենայնիվ օտարերկրյա ֆիրմաները դանդաղում են և չեն արդարացնում Թուրքիայի ակնկալությունները։ Այս աշխատանքների մեջ այժմ ընդգրկված են միայն մի քանի բո-

---

[47] „Yön", 9. 10. 1964.

[48] „Yön", 20. 2. 1964.

[49] Սկսած 1964 թվականից Թուրքիան պայմանական անդամ է Եվրոպական տնտեսական համագործակցության կազմակերպության։

[50] „Yön", 20. 2. 1964.

[51] „Yön", 20. 12. 1964.

[52] „Birinci Beş Yıllık Kalkınma Planı", s. 202.

[53] „Birinci Beş Yıllık Kalkınma Planı", s. 41.

[54] Նույն տեղում։

1963–67 թվականներին նավթի ներդրումները (մլն. թ. լ.)

	Արտաքին ֆինանսավորում	Ընդամենը
Պահպանման ծախսեր	62.6	75.1
Հետազոտման հորատումներ	69	239.9
Արդյունահանման հորատումներ	205	375
Տեղափոխման ծախսեր	300.4	550.4
Բաշխման ծախսեր	125	480

լորովին նոր ֆիրմաներ։ Ինչ վերաբերում է հներին, որոնք արդեն սկսել են իրենց նավթային գործառնությունը, ապա դրանք, վախենալով կորցնել Թուրքիայում սպառման՝ տարեցտարի աճող շուկան, ոչ միայն դադարել են հետազոտման աշխատանքներ կատարելուց, այլև նույնիսկ արգելակում են դրանք և կամ՝ լավագույն դեպքում, ձեռնտում, որ զբաղված են Թուրքական նավթի զարգացմամբ։ Պլանի արտաքին ֆինանսական նախատեսումների մեջ իր տեսակարար կշռով երկրորդ տեղն են բռնում արդյունահանման հորատումները, որոնք կազմում են ընդհանուր ներդրումների 27 տոկոսը։ Այս աշխատանքների կատարումը նախատեսված էր, հիմնականում, վերապահել նավթ հայտնաբերած օտարերկրյա ֆիրմաներին։ Սակայն, ինչպես ցույց են տալիս փաստերը, օտարերկրյա ֆիրմաները դանդաղկոտություն էին ցուցաբերում նույնիսկ այս բնագավառում։ Դա բացատրվում է նրանով, որ Թուրքական նավթի արդյունահանումը, իրականում, պահանջում է լրացուցիչ ծախսեր, քանի որ այն գտնվում է չափազանց մեծ խորություններում, այդ պատճառով էլ օտարերկրյա ֆիրմաները ձեռնպահ են մնում նավթարդյունահանումից։

Ինչպես վկայում են պլանի ներդրումները, տարեցտարի աճող արտաքին առևտրի բալանսի մեջ գոյացած դեֆիցիտից հիմնական փրկությունը Թուրքիան տեսնում է իր սեփական նավթարդյունաբերության զարգացման մեջ։ Բայց հազիվ թե իրականանա Թուրքիայի հույսերը, քանի որ 25 տարիների երկար որոնման արդյունքը առայժմ եղել է երկրի պահանջների միայն $^1/_4$-ի բավարարումը։ Ինչ վերաբերում է նավթի ընդհանուր պաշարներին, ապա դրանք աննշան են՝ հաշվվում են 60 մլն տոննա[55], և, բացի դրանից, բոլոր հորերից նավթի հանույթը քաշովի է, իսկ որակի տեսակետից՝ շատ ցածր (ծծմբի պարունակության մեծ հարաբերությամբ)։

Իբրև եզրակացություն մեր քննարկման, ամփոփենք. Թուրքիայի նավթային արդյունաբերության զարգացման ամբողջ պատմությունը վառ կերպով ցուցադրում է օտարերկրյա նավթային մոնոպոլիաների նվաճողական քաղաքականությունը, որը սերտորեն կապված է արևմուտքի ռազմական պլանների հետ։

Ներկայումս, երբ Մերձավոր Արևելքում հսկայական պայքար է ծավալված նավթից ստացված շահույթի ազգային բաժինը 60 տոկոսից ավելի բարձրացնելու համար, ընդհուպ նավթի ազգայնացման իրականացումը, Թուրքիան, ընդհակառակն, վերջերս ընդունեց այնպիսի նավթային օրենք, որը «ամենադեմոկրատականը» ճանաչվեց Արևմուտքում, ըստ որի միայն 40 տարուց հետո շահույթի ազգային բաժինը պետք է հասնի 50 տոկոսի։ Օտարերկրյա կապիտալի նկատմամբ հանդուրժողականության այդ քաղաքականությունը առաջին հերթին բխում էր կառավարող շրջանների արևմտյան կողմնորոշումից։

Օտարերկրյա նավթային ֆիրմաները օգտվելով Թուրքական նավթային օրենքի թուլությունից և նրա ընձեռած արտակարգ արտոնություններից, ոչ միայն կարողացան գրավել ներքին շուկան, այլև «Թուրքական նավթ զարգացնելու» լոզունգի տակ հասան նավթային մենաշնորհին։ Այսպիսով, օտարերկրյա նավթային ընկերությունների գործունեությունները ոչ միայն հակադրվում են երկրի ազգային շահերին, այլ նաև Թուրքական բուրժուազիայի առանձին շրջանների շահերին։

Օտարերկրյա նավթային մոնոպոլիաների ազդեցության ոլորտը, իհարկե, չի սահմանափակվում միայն երկրի տնտեսության կարևոր ճյուղերի նկատմամբ ունեցած իրենց վերահսկողությամբ, այլև երկրի արտաքին քաղաքականության նկատմամբ կոպիտ միջամտությամբ ու թելադրանքով։

[55] „Oil and state in the Middle East". G. Lencgowski. New York. 1960. p. 23.

А. МАРТИРОСЯН

ИНОСТРАННЫЙ КАПИТАЛ И ТУРЕЦКАЯ НЕФТЬ

Резюме

В статье рассматривается история развития нефтяной промышленности Турции и экспансии иностранного капитала. Иностранные нефтяные магнаты, финансируя разведку и эксплуатацию нефти, первоначально установили контроль над турецкой нефтью, а после ликвидации турецкой государственной монополии — свое господство. Осуществлению этих планов нефтяных монополий в большой степени способствовала ориентация господствующих кругов Турции на Запад, что привело к принятию в 1954 году закона о нефти, согласно которому была денационализирована нефтяная промышленность страны.

Иностранные нефтяные монополии не ограничились захватом нефтяных источников; они построили нефтеочистительные заводы, установив тем самым свое господство и на турецком рынке.

Захват внутреннего рынка иностранными монополиями вызвал глубокие противоречия как между турецкими и иностранными компаниями, так и среди местных компаний. Все это тормозило развитие турецкой нефтяной промышленности.

Прибыли иностранных компаний от эксплуатации и разработки нефтяных источников Турции достигают громадных размеров. Так, иностранные монополии вступают в противоречия не только с национальными интересами турецкого народа, но и с интересами отдельных кругов турецкой буржуазии.